

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետի թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

2. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.2-24)

Բաժնի առաջատար մասնագետը՝ մասնակցում է ՀՀ Վայոց ձորի մարզի /այսուհետ՝ Մարզ/ գյուղացիական և գյուղացիական կուլեկտիվ տնտեսությունների ագրարային ոլորտի տնտեսավարող այլ սուբյեկտների արտադրության կազմակերպման և զարգացման գործընթացին:

Մարզի գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մուլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքներին, գյուղատնտեսական պետական ծրագրերի մշակման աշխատանքներին, բնական աղետների հետևանքների ուսումնասիրության, աղետի պատճառած վնասի չափի որոշման աշխատանքներին:

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է Մարզի տարածքի սերմնաբուծական կազմակերպությունների տոհմաբուծարանների և արհեստական սերմնավորման կայանների հետ տարվող աշխատանքներին, ինչպես նաև Մարզի տարածքում անասնաբուժական ծառայությունների, հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքներին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝ գյուղական և ձկնային տնտեսություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն: Մրցույթը կկայանա 04.03.2014 թ. ժամը 14:15-ին, Ք.Եղեգնաձոր:

նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝ քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Վայոց ձորի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

*դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

*տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին:

*արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք:

*մեկ լուսանկար՝ 3x4 չափսի

*անձնագիր և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2014 թ փետրվարի 5-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարան:

Հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5:

Հեռ. (0281)2.22.52, 2.55.95:

